ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

04.06.2018թ. ժ.11:00

***Մասնակցում էին՝*** *Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ն.Բաղդասարյան, Ա.Սաֆյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*

***Հրավիրված էին՝*** *Լ.Միրզոյան, Ա.Վարդանյան, Լ.Մարկոսյան, Վ. Գևորգյան, Գ. Մելիքսեթյան, Ք.Պողոսյան, Կ.Շահբազյան, Ռ.Շարոյան*

**Օրակարգի նախագծում չորս հարց.**

1. «Գագիկ Անանյանին և Գագիկ Գևորգյանին Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալներ նշանակելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում՝ Ճապոնիայի Չիբա քաղաքում 2018 թվականի ապրիլի 23-ից 25-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «ԿԶՆ ցուցանիշների համար վիճակագրության որակ» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ռ.Շարոյան /*

3.2. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի ապրիլի 24-ից 27-ը «Մարդահամարի և բնակարանային հաշվառումների 2020 թ. համաշխարհային ծրագիր՝ միջազգային ստանդարտներ և ժամանակակից տեխնոլոգիաներ» խորագրով ՄԱԿ-ի տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ. Գևորգյան, Գ. Մելիքսեթյան/*

3.3. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2018 թվականի ապրիլի 24-ից 27-ը «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն. հիմնադրույթներ և սահմանումներ, 2010» ձեռնարկի հիմնական հասկացություններին, դրանց հետ կապված խնդիրներին, ինչպես նաև համապատասխան անձնակազմի հետ մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ք.Պողոսյան, Կ.Շահբազյան /*

3.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի մայիսի 7-ից 9-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետ համատեղ կազմակերպված Սպառողական գների ինդեքսների (ՍԳԻ) փորձագիտական խմբի երկամյա հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

3.5. Հաղորդում՝ Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում 2018 թվականի մայիսի 16-ից 17-ը Դագ Համմարսկոլդ (Dag Hammarskjöld) հիմնադրամի և Տվյալների Գործելու Լաբ-ի (Data Act Lab) կողմից կազմակերպված «Հետևում 2030թ. օրակարգի իրականացմանը» խորագրով գործընկերների ուսուցման սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/*

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Գագիկ Անանյանին և Գագիկ Գևորգյանին Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալներ նշանակելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից, որպես վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներ առաջարկվեց Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի անդամներ Գագիկ Անանյանի և Գագիկ Գևորգյանի թեկնածությունները և կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն: Քվեարկությանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 7 անդամներ:

Քվեարկության արդյունքները՝

Գագիկ Անանյանի կողմ 7, դեմ 0, ձեռնպահ 0

Գագիկ Գևորգյան կողմ 7, դեմ 0, ձեռնպահ 0

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշեց Գագիկ Անանյանին և Գագիկ Գևորգյանին նշանակել վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալներ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2016 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում՝ Ճապոնիայի Չիբա քաղաքում 2018 թվականի ապրիլի 23-ից 25-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «ԿԶՆ ցուցանիշների համար վիճակագրության որակ» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ռ.Շարոյան/*

3.2. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի ապրիլի 24-ից 27-ը «Մարդահամարի և բնակարանային հաշվառումների 2020 թ. համաշխարհային ծրագիր՝ միջազգային ստանդարտներ և ժամանակակից տեխնոլոգիաներ» խորագրով ՄԱԿ-ի տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ. Գևորգյան, Գ. Մելիքսեթյան/*

3.3. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2018 թվականի ապրիլի 24-ից 27-ը «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն. հիմնադրույթներ և սահմանումներ, 2010» ձեռնարկի հիմնական հասկացություններին, դրանց հետ կապված խնդիրներին, ինչպես նաև համապատասխան անձնակազմի հետ մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ք.Պողոսյան, Կ.Շահբազյան /*

3.4. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի մայիսի 7-ից 9-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետ համատեղ կազմակերպված Սպառողական գների ինդեքսների (ՍԳԻ) փորձագիտական խմբի երկամյա հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

3.5. Հաղորդում Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում 2018 թվականի մայիսի 16-ից 17-ը Դագ Համմարսկոլդ (Dag Hammarskjöld) հիմնադրամի և Տվյալների Գործելու Լաբ-ի (Data Act Lab) կողմից կազմակերպված «Հետևում 2030թ. օրակարգի իրականացմանը» խորագրով գործընկերների ուսուցման սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ 7, դեմ 0, ձեռնպահ 0/*

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ　　　　　　　　　　Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ